

կարելոյն կ'արդիւիէ այդ՝ ճեղքելու դէպքում:

Թոյլ տալ որ պալարը ինքնիրեն պայթի՝ անխոհեմութիւն է:

ԲԺ. ԵՐԻԱՆԴ ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

Սուտան

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՌՈՂ-ՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

«Բուժանք»-ի նախորդ երկու թիւերուն մէջ մեծ հաճոյքով կարդացի իմ սիրելի բարեկամ Տօքթ. Ա. Մէդպուրեանի Դպրոցական Առողջապահութեան վրայ դրած շահեկան յօդուածները:

Գիտական արդի օրէնքներու առաջադրութեամբ պատրաստուած խիստ կարեւոր հրահանգներ կը պարունակէին անոնք. երանի՜ թէ Ազգային Վարժարանները վարող մեր հոգաբարձու մարմիններու կողմէ ուշադրութեան առնուէին, յօգուտ առողջութեան այն մատաղ սերունդին զոր կը բաղկացնեն ապագայի հայրեր ու մայրեր:

Դպրոցական Առողջապահութիւնը շատ կանուխէն իմ մտածուածիս ազարկայ ըրած եմ: 1886-ին Իսկիկտարի Հայ Վարժարանները շարաթական այցելութիւններով կերթայի և բոլոր աշակերտները ու դասարանները աչքէ անցունելով կը հսկէի անոնց առողջութեանը. և երբ 1897-ին պատիւ ունեցայ Ազգ. Ուսումնական Խորհուրդի Ասենապետն ըլլալու, իմ ընկերներուս հետ համախորհուրդ, պատրաստեցինք կարգ մը հրահանգներ, զորս շրջաբերականի ձևով 1897 Ապրիլ 18-ին ուղղեցինք բոլոր Թաղ. Խորհուրդներու, և կրցանք ամէն վարժարանի համար յատուկ բժիշկ կարգել:

Կը ներկայացնեմ հոս այդ շրջաբերականի օրինակը, իբր լրացուցիչ մաս, Տօքթ. Ա. Մէդպուրեանի ա'յնչափ խնամքով պատրաստած առողջապահական պատուէրներուն.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ.

Վասն առողջապահիկ կանոնաց կիրառման.

Ազգային Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհուրդա իւր Մարտ 22-ի նիստին մէջ տուած որոշման համաձայն կը յանձնարարէ Գառ. Խորհրդոյդ,

1. Յանձնել ձեր վարժարանը խորհրդոյս կողմէն նշանակուած բժիշկին՝ Տօքթ.-ի, որուն պաշտօն է՝ շարաթական այցելութիւններով, վարել վարժարանին ընդհանուր առողջապահութիւնը:

2. Կատարել անյապաղ ի'նչ որ բժիշկը կը պատուիրէ և վարժարանիդ առողջապահական վիճակին կանոնաւորութիւնը կը պահանջէ:

3. Ունենալ յատուկ տոմար մը և հոն մի առ մի արձանագրել եղած և կատարուած բժշկական յանձնարարութիւնները, զորս Ուսումնական խորհուրդն հաւաքելով կը ծանօթացնէ հասարակութեան:

4. Հոգ տանիլ որ վարժարանիդ ներքին ընդհանուր մաքրութիւնն ինչպէս նաեւ ամէն դասականութիւնները, ուսանողներու մտային զբաղումները, զրօսանքը, բարոյական վիճակը, մարմնամարդական կրթութիւնները ևայլն, ըլլան միշտ բժիշկին առողջապահական հրահանգներուն համաձայն:

5. Զանալ, որ վարժարանիդ աշակերտներն ու աշակերտուհիներն՝ առանց պատուաստի չմնան, և առ այս՝ բժիշկին գործը դիւրացնելու համար, պատրաստ միշտ ունենալ պատուաստի թարմ հեղուկը:

6. Օրէնք ընել, որ տարախոխիկ հիւանդութեամբ վարակեալ տուներէ եկող, ինչպէս նաեւ նորեկ աշակերտներն և աշակերտուհիները վարժարան չ'ընդունուին առանց բժշկական արտօնագրի:

7. Ուշադիր ըլլալ, որ թեթեւօլիկ, մոլի, հիւանդոտ, անտարբեր, անկարող և աշակերտները ծեծող ու չարաչար պատժող դասատուները, վարժուհիները և տնտեսները, իրեւ խանգարիչ առողջապահական կանոններու ներդաշնակութեան, չպաշտօնավարեն՝ առանց բժշկական քննութեան և հրամանի:

8. Մասնաւոր խնամք և հոգածութիւն ունենալ աղքատ ուսանողին, և անթերի կատարել անոր առողջական վիճակին բարելաւութեան համար որոշուած բժշկական ո՛ր և է յանձնարարութիւն:

9. Նկատել առողջապահութիւնը մանկավարժութեան ընդակից մէկ մասը, և այս սկզբամբ յանձնել վարժարանդ կարող և հմուտ տեսչի մը խնամոց, որով թէ՛ թաղ. խորհրդոյդ պարտաւորութիւնները կը դիւրանան, և թէ՛ բժշկական հրահանգ կամ յանձնարարութիւն կ'ունենայ յաջող արդիւնք:

Ծնորհիւ սոյն հրահանգներու և որոշուած բժիշկներու, Կ. Պօլսոյ Աղդ. վարժարաններու Առողջապահութիւնը խաւական տարիներ դռնացուցիչ էին. չգիտեմ թէ այժմ ինչպէս է, բայց կը հաւատամ թէ դարձեալ աւագ ուշադրութեան առնուած է այն երբ Տօքթ. Ա. Մէզպուրեանի պէս կարող բժիշկ մը իր պարտականութիւնը կը համարի զբաղիլ անով:

Իր այս ձեռնարկին աւելի դիւրութիւն մը տալու համար կը ներեմ ինձ յանձնարարել իրեն՝ Դպրոցական Առողջապահութեան վրայ 1900-ին խօսած դասերս, որոնք առանձին հատորով ալ լոյս տեսան Վենետիկի Վանքէն 1908-ին: